Հ. Հ. Շիրակի մարզի Գյումրի համայնքի
փոխքաղաքապետ Ա. Ասլանյանին
Հասմիկ Մկրտչյանից հասցե՝ Ք. Գ.
Մ. Ավան 10շ. 41բ.
հ.093453051.

# Դիմում.

Անձամբ 2021-22թ. կառուցել եմ Գ. Բաղդասարի Տ.Ա. փողոցի թիվ 10շ. շենքում բնակարանային կառույցներ ապօրինաբար։ Օրինականացնելու նպատակով անկախ (գրավոր գործի ընթացքում) հարցադրել է հրապարակել գործը 29.01.26թ. ժամանակ գործը։ կարծում եմ։

Խնդրում եմ ձեռնարկել համապատասխան միջոցներ կարգով և ներկայացնել պատասխանը։ իմ կողմից կառույցների ապօրինաբար։

Դիմող. Հասմիկ. Մկրտչյան

05.02.2026թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԱՑՎԱԾ Է 05.02.2026
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 1524

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ

29-ը հունվարի, 2026թ. Գ.Գյումրի

Շիրակի մարզի դատախազի տեղակալ, առաջին դասի խորհրդական Ա.Ալեքսանյանս, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 18-0483-24 քրեական վարույթի նյութերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2024 թվականի ապրիլի 12-ին՝ ժամը 15:50-ին, Զարուհի Յոնեյի Զիլբերշտեյնը հաղորդում է տվել այն մասին, որ 2003 թվականից ունի կենդանիների առք ու վաճառքի խանութ Պարույր Սևակ փողոց 10 հասցեում, որի նկուղը օգտագործում է որպես պահեստարան: 2024 թվականի մարտի 24-ին Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանը, ունենալով իրենց նկուղին պատկից ապօրինի վարսավիրանոց, առանց իր համաձայնության կոտրել է նշված նկուղի մուտքի դռան կողպեքը և իրեն բանալի չի տրամադրել:

Հաղորդման առթիվ 2024 թվականի ապրիլի 13-ին Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 18-0483-24 քրեական վարույթը, կատարվում է նախաքննություն:

2024 թվականի օգոստոսի 19-ին Զարուհի Յոնեյի Զիլբերշտեյնը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ Գյումրի քաղաքի Պարույր Սևակի 10 շենքում իր տեգրը՝ Իոսիֆ Անտոնի Զիլբերշտեյնը ունի սեփականություն, որը տրամադրել է իրեն անվարձահատույց օգտագործման, և որ այդ շենքի բնակիչ Հայկանուշ Մկրտչյանի կողմից շենքի նկուղում առանց Գյումրու համայնքապետարանի կողմից թույլտվության և ճարտարապետանախագծային հանձնարարագրի իրականացվել են ինքնակամ ապօրինի շինարարական աշխատանքներ՝ քանդվել է շենքի ճակատային հատվածի հիմքը, տեղադրվել է դուռ: Հայկանուշ Մկրտչյանի կողմից շենքի նկուղում իրականացված ինքնակամ ապօրինի շինարարական աշխատանքների և նկուղում մի քանի կրող պատերի քանդման պատճառով շատ մեծ վնասներ են հասցվել Գյումրու Պարույր Սևակի 10 շենքի հիմքերին՝ թուլացնելով և շատ մեծ վտանգի տակ դնելով շենքի սեյսմակայությունը: Գյումրու Պարույր Սևակ 10 շենքում գտնվող իր տեգրոջ սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի (խանութի) ճակատային պատին՝ առանց սեփականատիրոջ թույլտվության և առանց Գյումրու համայնքապետարանի կողմից թույլտվության և ճարտարապետանախագծային հանձնարարագրի Հայկանուշ Մկրտչյանի կողմից ինքնակամ ապօրինի շինություն է կառուցվել: Գյումրի քաղաքի Պարույր Սևակի 10 շենքի նկուղում Հայկանուշ Մկրտչյանի կողմից իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների վերաբերյալ դեռևս 09.11.2021-ին Գյումրու համայնքապետարանի կողմից կազմվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի հատկանիշներով վարչական իրավախախտման արձանագրություն և հարուցվել է վարչական վարույթ, որտեղ որոշում է կայացվել ինքնակամ շինությունը քանդելու վերաբերյալ, ինչն առ այսօր չի իրականացվել:

2024 թվականի օգոստոսի 20-ին Շիրակի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 18118724 քրեական վարույթը, կատարվում է նախաքննություն:

Որոշում է կայացվել թիվ 18118724 քրեական վարույթը թիվ 18-0483-24 քրեական վարույթին միացնելու և համատեղ նախաքննություն իրականացնելու մասին:

Նախաքննության ընթացքում տուժող ճանաչված Զարուհի Զիլբերշտեյնը ցուցմունք է տվել և հայտնել այն մասին, որ 2003 թվականից Պարույր Սևակ 10/4 հասցեում ունի «Զո» անվանումով կենդանիների առք ու վաճառքի խանութ, որի տարածքը օգտագործման իրավունքով պատկանում է իրեն: Նույն հասցեում ունի նաև նկուղ, որը նույնպես շուրջ 20 տարի օգտագործվել է իր կողմից և երբևէ որևէ բնակչի կողմից նշված նկուղի հետ կապված որևէ խնդիր չի ունեցել: Մոտ 2 տարի առաջ Հայկանուշ Մկրտչյանը, ով բնակվում է վերը նշված խանութի 2-րդ հարկում իր նկուղին պատկից բացել է վարսավիրոց: Դեպքից մոտ 1 ամիս առաջ վերջինիս հայրը՝ Ալեքսան Մկրտչյանը իրեն ասել է, որ ցանկանում է, որ նկուղի տարածքը լինի իրենց վարսավիրանոցի տարածքը ընդլայնելու համար, ինչը մերժվել է իր կողմից, քանի որ ինքը ասել է, որ այդ նկուղում ունի սեփական գույք, որոնք դուրս բերել չի կարող և չի ցանկանում: Վերջինիս հետ շփման հնարավորություններից խուսափելու համար որոշել են խանութի մեջից բացել առանձին մուտք դեպի նկուղի իրենց հատվածը, ինչի մասին իմանալով Հայկանուշ Մկրտչյանը 2024 թվականի մարտի 23-24-ին հստակ օրը չի մտաբերում եկել է իր խանութ, իր և աշխատակցուհու՝ Նելլի Ղազարյանի ներկայությամբ բղավել, հայհոյել՝ ասելով, որ դադարեցնեն աշխատանքները, ինքը կբողոքի: Որպեսզի վիճաբանություն չսկսվեր իրենց մեջ, ինքը վերջինիս հանգիստ ձևով դուրս է հրավիրել խանութի տարածքից: Խանութից դուրս գալով՝ Հայկանուշ Մկրտչյանը գնացել է նկուղ, որտեղից ինքը լսել է մուրճի ձայներ և հետո միայն նկատել, որ կոտրված է նկուղի դուռը ամբողջությամբ և բացված հատվածում տեղադրել է նոր դուռ, նոր կողպեք դրել՝ փակելով դեպի նկուղ իր մուտքը: Հստակ չի կարող ասել, թե կատարվածի հետևանքով իրեն որքան վնաս է պատճառվել, իր պահանջը մեկն է վերականգնել նկուղի դուռը և չխոչընդոտել իր մուտքը դեպի իր նկուղ:

Վկա Հայկանուշ Մկրտչյանը ցուցմունք է տվել և հայտնել այն մասին, որ շուրջ 30 տարի է ինչ բնակվում է Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10 շենքի 41 բնակարանում ընտանիքի հետ համատեղ: Զարուհի Զիլբեյնշտեյնին ճանաչում է մոտ 1 տարի, նրան գիտի նշված շենքի տարածքում որպես կենդանիների խանութի աշխատակից, վերջինիս հետ ունի նորմալ հարաբերություններ: Մոտ մեկ տարի է, ինչ վերջինիս խնդրանքով և իր համաձայնությամբ ու հսկողությամբ վերը նշված շենքի նկուղի մեկ առանձնացված հատված տրամադրել է նրան իր խանութի ապրանքները այնտեղ ժամանակավոր պահելու համար: Զարուհի Զիլբեյնշտեյնի մուտքն ու ելքը նկուղ մշտապես եղել է իր հսկողությամբ, այսինքն՝ վերջինս չի ունեցել որևէ բանալի: Հայտնել է նաև, որ նկուղը օգտագործվում է շենքի բնակիչների, մասնավորապես՝ իր, ընտանիքի անդամների և վարձակալ Քնարիկի կողմից: Նկուղի տարածքում բնակիչներից յուրաքանչյուրին հատկացվող տարածքը եղել է բնակիչների ներքին համաձայնությամբ: 2024 թվականի մարտի 24-ին, երբ գտնվել է տանը, լսել է բարձր ձայներ, աղմուկ և անհանգստանալով այդ հանգամանքից՝ գնացել է շենքի նկուղ և նկատել, որ քանդված է նկուղի իր կողմից օգտագործվող հատվածի առաստաղը, այնուհետև, գնալով Զարուհու

խանութ, վերջինիս հարցրել է, թե ինչ քանդման աշխատանքներ են իրականացվում, խնդրել է կասեցնել, վերջինս նշել է «լավ եմ անում», ինչից հետո ինքը զանգահարել է Գյումրու համայնքապետարանի ապօրինի շինության բաժին, որի աշխատակիցների կողմից կասեցվել է քանդման աշխատանքները: Վարույթն իրականացնող մարմնի այն հարցին, թե իր և Զարուհի Զիլբեյնշտեյնի միջև 2024 թվականի մարտի 24-ից հետո տեղի ունեցած տարաձայնությունից հետո իր կողմից նկուղում բանալիների կամ դռան փոփոխություն իրականացվել է, թե ոչ, Հայկանուշ Մկրտչյանը հայտնել է, որ նկուղի բանալիներ ունեցել են շենքի բոլոր բնակիչները, ինքը ունեցել է նկուղի բանալին փոխելու իրավունք և փոխել է, իսկ ընդհանուր նկուղում առանձնացված հատվածի համար որևէ դուռ չի եղել և չի կոտրվել:

Դեպքի վայր հանդիսացող Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10 շենքի նկուղային հատվածի զննությամբ պարզվել է, որ շենքի դեպի մուտք առկա է մեկ երկաթյա դուռ, որից ներս նախասրահ է, որից դեպի աջ ուղղությամբ առկա է աստիճանավանդակ դեպի բնակարաններ, իսկ ձախակողյան հատվածում առկա է մեկ փայտյա դուռ, որը ըստ զննության մասնակից Հայկանուշ Մկրտչյանի հայտարարության՝ տանում է դեպի նկուղ: Նշված դռնից ներս աստիճանավանդակի միջոցով մուտք է բացվում դեպի նկուղ, որի ձախ կողմում այլ անձանց նկուղային հատվածներն են հանդիսանում, իսկ աջ կողմում առկա է մեկփեղկանի երկաթյա դուռ, որը բացվում է դեպի դուրս ուղղության և ըստ Հայկանուշ Մկրտչյանի հայտարարության հանդիսանում է իր նկուղի դուռը: Նշված դռնից ներս առկա է 3x7 չափերի տարածք, որտեղ դրված են տարբեր տեսակի փայտյա գույք, պահածոների ամբողջական և դատարկ տարրաներ: Նշված հատվածից դռան համար նախատեսված մասով բացվում է ևս մեկ 3x7 չափերի տարածք, որտեղ դրված են տարբեր տեսակի ակվարիումներ, փայտյա դարակներ, կենդանիների համար նախատեսված պարկով կերեր: Զննության մասնակից Հայկանուշ Մկրտչյանը, մատնացույց անելով նշված հատվածի առաստաղին առկա 1x1,5 չափերի բացված, այնուհետև քարերով ծածկված անցքը, հայտարարեց, որ դա կատարվել է Զարուհի Զիլբեյնշտեյնի կողմից 2024 թվականի մարտի 25-ին նշված տարածք մուտք գործելուց հետո և իր կողմից նշված գործողությունները կանխվել են՝ նրանց խանութի տարածքից փակելու միջոցով: Նշել է նաև, որ վերը նկարագրված հատվածում մուտքի դուռ նախատեսված չի եղել, երբևէ դրված չի եղել, մուտքը նկուղ կատարվել է միայն զննությամբ ֆիքսված մեկ երկաթյա դռան միջոցով: Ըստ Հայկանուշ Մկրտչյանի հայտարարության Զարուհի Զիլբերշտեյնը նրա խանութի համար նախատեսված և իր նկուղում դրված ապրանքները մշտապես վերցրել է իր կողմից նկուղը բացելու միջոցով, իսկ առաստաղի նշված հատվածի բացվածքը ըստ իրեն կատարվել է նշված նկուղ ներս գործելու համար: Զննության մասնակից Հայկանուշ Մկրտչյանի պաշտպան Արմենուհի Ղանդիլյանի հայտարարության՝ ինքը ուսումնասիրել է Զարուհի Զիլբերշտեյնի կողմից նշված շենքում սեփականության վկայականով տեղամասված իրավազորությունները և պարզել, որ վերջինս ոչ մի իրավունք նշված նկուղի նկատմամբ չունի: Մատնացույց անելով նաև առաստաղի արդեն իսկ քարերով փակված հատվածը՝ հայտարարել է, որ դա կատարվել է Զարուհի Զիլբերշտեյն կողմից իրենց կողմից այդ մասին բարձրաձայնելուց հետո: Հայկանուշ Մկրտչյանը հավելել է նաև, որ նկուղի վերը նկարագրված հատվածը մոտ 1 տարի է ինչ իր թույլտվությամբ տրամադրվել է Զարուհի Զիլբերշտեյնին՝ իր ապրանքները այնտեղ պահելու համար:

Տուժող Զարուհի Զիլբերշտեյնի և վկա Հայկանուշ Մկրտչյանի միջև կատարված առերես հարցաքննության ժամանակ Զարուհի Զիլբերշտեյնը պնդել է նախկինում տված ցուցմունքը՝ հավելելով, որ իր մուտքը նկուղ եղել է իր մոտ գտնվող բանալիով, երբևէ Հայկանուշ Մկրտչյանի հսկողությամբ կամ թույլտվությամբ մուտք չի գործել, եղել է ընդհանուր մուտքից առանձնացված հատվածով մուտք դեպի իր կողմից օգտագործվող նկուղ, որը իր և իր ընտանիքի կողմից օգտագործվել է շուրջ 20 տարի: Իսկ վկա Հայկանուշ Մկրտչյանի պաշտպանի հարցերի վերաբերյալ հայտնել է, որ խանութը պատկանում է իր ամուսնու եղբորը՝ Իոսիֆ Զիլբերշտեյնին և վերջինիս կնոջը՝ Էիանա Զիլբերշտեյնին: Այդ խանութում շուրջ 20 տարի գործունեություն իրականացնում է ինքը: Թույլտվություն նկուղը օգտագործելու վերաբերյալ չի եղել, դա եղել է ազատ տարածք, որը ժամանակին վերցվել է իր կողմից և երբևէ հարևանների, բնակիչների հետ նկուղի հետ կապված որևէ խնդիր չի եղել: Շենքի նկուղային հատվածը ունի ընդհանուր նկուղ տանող առանձնացված դուռ իր կողպեքով, որի բանալիները ունեն շենքի բնակիչները:

Ինքը մշտապես անարգել ունեցել է մուտք և ելք դեպի իր նկուղ, որը եղել է առանձին մուտքով, առանձնացված դռնով, որի վրա դրվել է կողպեք և բանալին, որն էլ ունեցել է ինքը: Նկուղի դռան շրջանակի չորսբոլորը փակ չի եղել, առկա են եղել անհարթ եզրեր, իսկ շինարարական աղբ նախկինում երբևէ չի եղել, իսկ նկուղի դռան ապամոնտաժման մասին տեղեկացել է այն ժամանակ, երբ լսել է մուրճի ձայներ տվյալ հատվածում, ինչպես նաև իր կողմից բացված առաստաղի անցքից տեսել է, ունի նաև այդ փաստը հավաստող լուսանկարներ, որոնք իրականացվել են իր աշխատակից Նելլի Ղազարյանի կողմից: Իրեն պատճառվել է մոտ 250,000 ՀՀ դրամի գույքային վնաս, սակայն այդ մասին որևէ փաստաթուղթ չի կարող ներկայացնել, գնել է կանխիկ եղանակով 2 տարի առաջ: Հայկանուշ Մկրտչյանի հետ չի ունեցել նկուղի հետ խոսակցություն, միայն դեպքին նախորդող ժամանակահատվածում վերջինիս հայրը Ալեքսան Մկրտչյանը իրեն հայտնել է, որ ցանկանում են ընդլայնել վարսավիրանոցի տարածքը նկուղի հաշվին և իր նկուղում գտնվող իրերը անհրաժեշտ է դուրս բերել այդ տարածքից: Դրա համար առաջարկվել է իրեն նույնիսկ ավելի փոքր տարածք, ինչին ինքը չի համաձայնվել:

Վկա Հայկանուշ Մկրտչյանը ցուցմունք է տվել և հայտնել, որ Զարուհի Զիլբերշտեյնի հայտնած հանգամանքները իրականությանը չեն համապատասխանում, նման բան չի եղել, վերջինիս մուտքը իր նկուղ եղել է մշտապես իր հսկողությամբ, իր ներկայությամբ և իր թույլտվությամբ: Այդ վայրում երբևէ դուռ չի եղել առանձնացված և չի կոտրվել:

Վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննվել է «Զու» խանութի վաճառողուհի Նելլի Ղազարյանը և ցուցմունք տվել այն մասին, որ շուրջ 11 տարի է ինչ աշխատում է Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10/4 հասցեում գտնվող «Զու» անվամբ կենդանիների խանութում որպես վաճառողուհի: Աշխատանքը ամենօրյա է՝ ժամը 10:00-ից 19:00-ը: Հայկանուշ Մկրտչյանին ճանաչում է մոտ 2-3 տարի, երբ վերջինս ամուսնալուծվել և եկել էր բնակվելու իր հայրական տանը, որը գտնվում է այն շենքում, որտեղ գտնվում է իրենց խանութը: Տեղյակ է նաև, որ վերջինս այդ շենքի առաջին հարկում ունի վարսահարդարման սրահ: 2024 թվականի մարտի 24-ին, գտնվել է աշխատանքի վայրում, երբ խանութ է եկել Հայկանուշը և գոռգոռալով նշել, որ դադարեցնի խանութում բացվող լուքի աշխատանքները, ինչից հետո խանութի տնօրեն Զարուհին վերջինիս դուրս է հրավիրել խանութից: Հստակ չի հիշում այդ ժամանակ

իրենից և Զարուհուց բացի խանութում այլ անձինք եղել են, թե ոչ, խանութում չկան նաև տեսանկարահանող սարքեր: Հայտնել է, որ իրենց խանութում բացված է եղել հատակից դեպի նկուղ տանող լուք, սակայն փակված է եղել, որն էլ իրենց կողմից կրկին աշխատանքային գործիքի միջոցով բացվել էր: Որից հետո Հայկանուշը, իջնելով Զարուհուն պատկանող նկուղ, կոտրել է նկուղի երկաթյա դուռը, ինքը լսել է մուրճի հարվածների ձայները, ինչպես նաև վերջինիս հայհոյախառն խոսքերը, ինչպես նաև խանութի լուքից նկատել է նկուղի լուսավորությունը միացված, որը հնարավոր էր միայն նկուղի մտնելու դեպքում: Մի քանի օր հետո, երբ ինքն է իջել նկուղ տեսել է, որ բացակայում է նկուղի երկաթյա դուռը, որը կոտրված գցված է եղել գետնին: Հայտնել է նաև, որ որքան ժամանակ ինքն աշխատում է նշված խանութում, այդ խանութի նկուղը մշտապես օգտագործվել է Զարուհու կողմից՝ իրեն պատկանող խանութի ապրանքները այնտեղ պահելու նպատակով: Նկուղի բանալիները միշտ եղել են Զարուհու մոտ՝ խանութում, և թե՛ ինքը, թե՛ Զարուհին միշտ անարգել մուտք ու ելք են ունեցել նկուղ: Երբևէ չի եղել նման դեպք, որ Հայկանուշի միջոցով կամ ներկայությամբ իրենք մուտք գործեն նկուղ: Հայտնել է նաև, որ դեպքին նախորդող ժամանակահատվածում Հայկանուշ Մկրտչյանի հայրը՝ Ալեքսան Մկրտչյանը եկել է իրենց խանութ և ասել, որ ցանկանում են Զարուհու կողմից օգտագործվող և վերջինիս պատկանող նկուղի հաշվին ընդլայնել Հայկանուշի վարսահարդարման սրահը, քանի որ այն պատկից է նկուղին: Այդ առաջարկին Զարուհին չի համաձայնվել:

Վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննվել է Գայանե Սահակյանը և ցուցմունք տվել այն մասին, որ շուրջ 30 տարի է ինչ հանդիսանում է «Բարձրաբերդ» համատիրության նախագահը: Զարուհի Զիլբեյնշտեյնին ճանաչում է իր ազգականների միջոցով, իսկ Հայկանուշ Մկրտչյանին ճանաչում է որպես իր վարսահարդար: Վերջիններիս հետ գտնվում է նորմալ հարաբերություններ մեջ: Նրանց միջև Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10 հասցեում գտնվող շենքի նկուղի հետ կապված վեճի մասին իրեն հայտնի է միայն այն, որ Զարուհին մոտ 1 տարի է ինչ ի պահ է տվել Հայկանուշին նկուղում պահելու իր խանութի գույքը, նրա մուտքն ու ելքը նկուղ կատարվել է միայն Հայկանուշի միջոցով, նա որևէ բանալի չի ունեցել: Նկուղի ընդհանուր մուտքի դռան և նկուղի այդ հատվածի բանալին ունեցել է միայն Հայկանուշը: Զարուհու խնդրանքով Հայկանուշը տրամադրել է նկուղը իր խանութի ապրանքները այնտեղ պահելու համար: Այդ նկուղը ունեցել է մեկ երկաթյա դուռ, որից ներս եղել են երկու սենյակներ, որոնք միմյանցից առանձնացվել են պատի միջոցով, եղել է նաև դռան համար նախատեսված կորպուս, սակայն դուռ երբևէ չի եղել: Նկուղում եղել է ինչպես Հայկանուշին պատկանող գույք, այնպես էլ Զարուհուն: 2024 թվականի մարտ ամսին, երբ կրկին անձնական գործով այցելել է Հայկանուշի վարսահարդարման սրահ, որը գտնվում է այդ շենքում, լսել է բարձր ձայնով խոսակցություններ, ձայներ Զարուհու խանութից և հետաքրքրությունից դրդված բարձրացել է խանութ և նկատել, որ Հայկանուշը և Զարուհին բարձր տոնայնությամբ խոսել են միմյանց հետ, ինչի ժամանակ Հայկանուշը նշել է, որ արգելում է Զարուհու մուտքն ու ելքը նկուղ, քանի որ վերջինս իր խանութի հատակից ապօրինի մուտք է գործել նկուղ, որի համար դիմել է նաև համապատասխան մարմիններին, ովքեր եկել և կատարել են այդ քանդման աշխատանքները: Որքանով իրեն հայտնի է այդ նկուղում Հայկանուշի կողմից երբևէ քանդման շինարարական աշխատանքներ չի կատարվել: Պատճառը, որ Զարուհին որոշել է առանձին մուտք բացել դեպի նկուղ, ըստ իրեն վերջինիս

ցանկությունն է ապօրինի զավթելու նկուղի այդ հատվածը: Որպես համատիրության նախագահ միայն կարող է նշել, որ շենքի նկուղները օգտագործվում են միայն շենքի բնակիչների կողմից, իսկ Զարուհին շենքի բնակիչ չի հանդիսանում և չի կարող օգտագործել այդ նկուղը, քանի որ նա շենքի ընդհանուր բաժնային սեփականատեր չի հանդիսանում:

Տուժող Զարուհի Զիլբերշտեյնը լրացուցիչ ցուցմունք է տվել և հայտնել այն մասին, որ Հայկանուշ Մկրտչյանի կողմից 2021 թվականի ընթացում Գյումրի քաղաքի Պարույր Սևակի 10 շենքի նկուղային հատվածում կատարվել է ապօրինի շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ նախկինում շենքի դրսային հատվածում նկուղային մասում որևէ դուռ կամ բացվածք չի եղել, որը հավաստող լուսանկարներ իր մոտ առկա են: Այդ մասին հայտնել է Գյումրու համայնքապետարանին, որի համապատասխան բաժնի աշխատակիցների կողմից կատարվել են ստուգայցեր, որից հետո իրեն գրավոր կերպով հայտնել են, որ Հայկանուշ Մկրտչյանի կողմից կատարված աշխատանքները ապօրինի են և ենթակա են քանդման, այնուհետև որոշ ժամանակ անց հստակ ժամանակը չի մտաբերում համայնքապետարանի մեկ այլ գրությամբ հայտնվել է, որ շինարարական աշխատանքները կատարվել է սահմանված թույլտվությամբ և որևէ խախտում առկա չէ, այսինքը՝ ապօրինի գործողություն չի կատարվել, եղել է այդ հատվածում փայտյա դուռ, որը ուղղակի փոխարինվել է երկաթյա դռնով, այնինչ այդ հատվածում եղել է միայն փոքրիկ պատուհան: Միաժամանակ նշել է, որ համայանքապետարանից իրեն հայտնել է, որ ի սկբանե եղել է նշված բացվածքը, որը կահավորված է եղել փայտյա դռնով, մինչդեռ պնդել է, որ ի սկբանե շենքի ճակատային հատվածից նման բացվածք չի եղել, բացվածքը վերակառուցվել է Հայկանուշ Մկրտչյանի կողմից առանց համապատասխան թույլտվությունների:

Վկա Հայկանուշ Մկրտչյանը լրացուցիչ ցուցմունք է տվել և հայտնել այն մասին, որ իր կողմից Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10 շենքի նկուղային հատվածում իրականացվել է ինքնակամ շինության կառուցում, որի ժամանակ համայքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից հարուցվել է վարչական վարույթ, ինչից հետո իր կողմից խախտումները վերացնելուց հետո դիմել է Գյումրու համայնքապետարան, ստացել համապատասխան թույլտվություն, վարձակալական հիմունքներով է այն օգտագործում, որի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը առկա են:

Գյումրու համայնքապետարանի կողմից տրված գրության համաձայն՝ Հայկանուշ Մկրտչյանի կողմից իրականացված ինքնակամ շինարարարական աշխատանքների վերաբերյալ 09.11.2021 թվականին կազմվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի հատկանիշներով վարչական իրավավախախտման արձանագրություն և հարուցվել է վարչական վարույթ, որտեղ որոշում է կայացվել ինքնակամ շինությունը քանդելու վերաբերյալ:

Ըստ Գյումրու համայնքի ղեկավարի տեղակալի կողմից քաղաքացի Իոսիֆ Զիլբերշտեյնին հասցեագրված գրության՝ Գյումրու համայնքի կարիքների համար մի շարք միավոր ծավալով շինարարական էլեմենտների, կոնստրուկցիաների քանդման աշխատանքների ձեռքբերման համար 2022 թվականի ընթացքում հայտարարվել է 3 գնման ընթացակարգ, վերջին ընթացակարգի բացման նիստը տեղի է ունեցել օգոստոսի 01-ին: Բոլոր ընթացակարգերը հայտարարվել են չկայացած մասնակցության հայտ չլինելու հիմքով:

Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոցի 10 հասցեում վարչական իրավախախտում կատարած անձ՝ Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակվել է վարչական ակտով՝ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 16-ին կայացվել է «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, ինքնակամ շինարարության հետևանքները վերացնելուն պարտավորեցնելու մասին» թիվ Վ/Տ 175 Դ/Ա-Ա որոշում:

Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոց 10 շենքի հարևանությամբ Հայկանուշ Մկրտչյանին շինարարական աշխատանքներ իրականացնելու համար Գյումրի համայնքի ղեկավարի կողմից նախագծման շինարարության թույլտվություններ տրված չէ:

11.01.2023 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 10 հասցեի բազմաբնակարան շենքին կից 10.77 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 10.77 քառակուսի մետր՝ արտաքին 8.21 քառակուսի մետր ներքին մակերեսով նախամուտքը համարել համայնքի սեփականություն և նախապատվության իրավունքով (վարձակալություն) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանին՝ միաժամանակ արձանագրելով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

20.01.2023 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոց 10 հասցեի շենքին կից 10.77 քմ մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված 10.77 քմ արտաքին մակերեսով նախամուտքին տրամադրել հասցե՝ քաղաք Գյումրի Պարույր Սևակ փողոց 10/8:

21.02.2023 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել թույլատրել Ա/Ձ Հայկանուշ Մկրտչյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10/8 հասցեում տեղադրել գովազդային վահանակ:

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված գրության համաձայն՝ Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 10 շենքի նկուղային հարկի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված շենքի բնակիչ Հայկանուշ Մկրտչյանը նկուղային հարկը, շենքի բնակիչների համաձայնությամբ, օգտագործում է որպես գեղեցկության սրահ, իսկ սրահին կից կառուցված նախամուտքը Գյումրի համայնքի կողմից ճանաչվել է որպես համայնքի գույք և ընթանում է գույքի Հայկանուշ Մկրտչյանին վարձակալությամբ տրամադրելու գործընթացը, իսկ տարածքի զննությամբ պարզվել է, որ շենքի հիմնասյուների և հիմնական կոնստրուկցիաների փոփոխություններ չեն իրականացվել:

Ըստ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի Ձև 8 տեղեկանքի՝ Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի դատվածության առկայության վերաբերյալ տվյալներ չեն ստացվել:

Ուսումնասիրելով թիվ 18-0483-24 քրեական վարույթի նյութերը գտնում եմ, որ պետք է որոշում կայացնել հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 22-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:*

*(...)*

*5. Հանցագործության համար անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի փոխկապակցված վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջությամբ (...)»:*

Օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝

*«Ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ հաստատելու կամ հերքելու նպատակով ապացույցներ հավաքելը, սկսելը և գնահատելն է:»:*

Օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«Քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են՝ դեպքը և դրա հանգամանքները (ժամանակը, տեղը, եղանակը և այլն), մեղադրյալի առնչությունը դեպքին, ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները, մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ, (...):*

Օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:*

*2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ:*

*3. Ոչ մի փվյալ նախապես հավաստի ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև քննիչը և դատախազը չպետք է կանխակալ վերաբերմունք դրսևորեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանք չեն գնահատվել:»:*

**ՀՀ վճռաբեկ դատարանը, Սիրակ Մաքանյանի վերաբերյալ 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշմամբ համեմատական վերլուծության ենթարկելով «ապացուցման առարկա» և «ապացույցների բավարարություն» հասկացությունները, անդրադառնալով վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզմունքին, անմեղության կանխավարկածին, դատավարական որոշումների հիմնավորվածության ու պատճառաբանվածությանը, նշել է.** *«(...) եթե ապացուցման առարկան ցույց է տալիս, թե ինչ է անհրաժեշտ պարզել յուրաքանչյուր քրեական գործով, ապա ապացույցների բավարարությունը կապված է այն ապացուցողական*

*:ության հետ, որը վերաբերվում է ապացուցման առարկային և թույլ է տալիս այդ հանգամանքների մասին գալ արժանահավատ հետևության: Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ի՞նչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ի՞նչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար: Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր փարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը:*

*Ի տարբերություն ապացուցման առարկայի, ապացույցների բավարարություն հասկացության բովանդակությունը քրեական դատավարության օրենսդրությամբ բացահայտված չէ, այսինքն՝ օրենքում հստակ նշում չկա այն մասին, թե մինչև ե՞րբ պետք է հավաքվեն և հետազոտվեն ապացույցները, որպեսզի յուրաքանչյուր գործով պարզվի ապացուցման առարկան ամբողջությամբ կամ նրա տարրերն առանձին վերցրած: Բացի այդ, օրենքում սահմանված չէ միասնական չափանիշ առ այն, թե ե՞րբ են ի հայտ գալիս յուրաքանչյուր քրեական գործով ապացուցման առարկան բացահայտված համարելու հիմքերը:*

*Ապացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով:*

*Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝*

*1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,*

*2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,*

*3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում: (...)»:*

**ՀՀ վճռաբեկ դատարանը Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի վերաբերյալ 2010 թվականի փետրվարի 12-ին թիվ ԵՔՐԴ/0632/01/08 գործով կայացված որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ.** *«(...) Ներքին համոզմունքը, որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով, այն, մի կողմից, պետք է թխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից, անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ:»:*

**Մեկ այլ՝ Արարատ Ավագյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0252/01/13 գործով կայացված որոշմամբ անդրադառնալով ապացույցի արժանահավատության հատկանիշին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ.** *«(...) Այն նույնպես վերաբերում է ապացույցի բովանդակային գնահատմանը: Յուրաքանչյուր ապացույց արժանահավատության տեսանկյունից պետք է գնահատվի ապացույցների համակցության*

*մեջ բազմակողմանի և մանրամասն գնահատելով փաստական տվյալների ստացման աղբյուրները և ապացույցի ձևավորման ամբողջ ընթացքը: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ վերջնական որոշում կարող է կայացվել դրա բովանդակությունն այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու արդյունքում: Որոշակի փաստի վերաբերյալ այս կամ այն աղբյուրից ստացված տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել ստացված տեղեկությունների բովանդակությունը, համադրել դրանք այլ ապացույցների հետ, պարզել դրանց համապատասխանությունը կամ հակասությունը, հակասության դեպքում՝ դրա պատճառները: Ապացույցի արժանահավատության վերաբերյալ եզրահանգումները պետք է հիմնվեն գործում առկա փաստական տվյալների վրա:»:*

Վերոգրյալի իրավական նորմերի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ մարդու անմեղությունը քրեական դատավարության կարևորագույն կանխավարկածներից է, որն ամրագրված է ինչպես Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, այնպես էլ նախադեպային իրավունքով: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն, ըստ էության, վերարտադրել է Սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածի իրավունքը, նաև ամրագրել է անմեղության կանխավարկածի հիմնական բաղադրիչները, որոնք համակցության մեջ արտացոլում են դրա բովանդակությունը: Հանցանք կատարելու մեջ անձի մեղավորությունը հաստատված համարելը ոչ այլ ինչ է, քան անմեղության կանխավարկածի հաղթահարում: Միևնույն ժամանակ, անձին դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցության բացակայությունը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հերքված չէ: Այլ կերպ՝ քրեական դատավարության ընթացքում չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը:

Հարկ է արձանագրել նաև, որ անմեղության կանխավարկածի բովանդակությունը բացահայտվում է ոչ միայն համանուն սկզբունքի բուն էությունն ամրագրող հոդվածում, այլև այս սկզբունքի կենսագործման, նույնն է թե անձի մեղավորության հաստատման համար անհրաժեշտ դատավարական չափորոշիչները սահմանող իրավադրույթներում, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ ապացույցների գնահատման կանոնները պարտավորեցնում են նույն օրենսգրքում թվարկված՝ ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այսինքն՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների և (կամ) կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնը, որի համաձայն՝ չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը, նշանակում է, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս, որպես ապացույցների բավարարության չեմ, պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Որպես այդպիսին պետք է հասկանալ ապացույցների այնպիսի համակցությունը,

որը բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը: Դա, իհարկե, չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն դրա հավանականության աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած ողջամիտ կասկած:

Պաշտպանության կողմին բավարար է հիմնավորված, այսինքն՝ փաստարկված կասկածներ սերմանել մեղադրանքի ապացուցվածության վերաբերյալ, որոնք էլ օրենքի ուղղակի պահանջով մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի: Հետևաբար, երբ վարույթի քննության կամ լուծման ընթացքում ինչ-որ հանգամանք կասկած է հարուցում, կամ երբ այս կամ այն փաստը կարող է տարակերպ մեկնաբանվել կամ հասկացվել, կամ երբ այս կամ այն ապացույցի հավաստիության վերաբերյալ առկա են կասկածներ, դրանք պետք է մեկնաբանվեն բացառապես ի շահ մեղադրյալի:

ՀՀ քրեական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում *պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելու և դրա հետևանքները չվերացնելու, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի, շինության կամ այլ կառույցի կառուցումը կամ վերակառուցումը կամ տեղադրումը չդադարեցնելու կամ անօրինական կառույցը չքանդելու կամ չապամոնտաժելու կամ առանց թույլտվության շինարարության կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելու համար, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:*

ՀՀ քրեական օրենսգրքի 460-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում *ինքնիրավության՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքն ինքնակամ իրականացնելու համար, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին:*

*Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը:*

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ *հափշտակված գույքի, **պատճառված գույքային վնասի**, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մեծ չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), **խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը)**, առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված եղանակներից որևէ մեկով: Անթույլատրելի է քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում: Քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, իսկ քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով իրավունքի պահպանիչ գործառույթը, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ:

Ինչպես հետևում է ՀՀ քրեական օրենսգրքի 448-րդ հոդվածի դիսպոզիցիայից անձի նկատմամբ հիշյալ հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ այն պարագայում, երբ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի, շինության կամ այլ կառույցի կառուցումը կամ վերակառուցումը կամ տեղադրումը չդադարեցնելը կամ անօրինական կառույցը չքանդելը կամ չապամոնտաժելը կամ առանց թույլտվության շինարարության կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը կատարվել է <u>նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:</u>

Քննարկվող դեպքում Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոցի 10 հասցեում վարչական իրավախախտում կատարած անձ՝ Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակվել է վարչական ակտով՝ Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 16-ին կայացվել է «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, ինքնակամ շինարարության հետևանքները վերացնելուն պարտավորեցնելու մասին» թիվ Վ/Տ 175 Դ/Ա-Ա որոշումը, որով արձանագրվել է, որ Հայկանուշ Մկրտչյանը Գյումրի քաղաքի Պ.Սևակ փողոցի 10-րդ շենքի նկուղային հատվածում կատարել է ինքնակամ շինարարական աշխատանքներ՝ առանց համապատասխան թույլտվության քանդել է շենքի հիմնապատը բացելով նկուղի դուռ:

Հիշյալ որոշման կայացումից հետո մեկ տարվա ընթացքում Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի կողմից առանց օրենքով սահմանված կարգով ստացված թույլտվության իր կողմից կատարված արարքը շարունակելու վերաբերյալ փաստական տվյալներ չեն ստացվել՝ ավելին ինքնակամ կառույցը համայնքը ճանաչել է որպես իր սեփականություն, 20.01.2023 թվականին Գյումրի համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել Գյումրի քաղաքի

Պարույր Սևակի փողոց 10 հասցեի շենքին կից 10.77 քմ մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված 10.77 քմ արտաքին մակերեսով նախամուտքին տրամադրել հասցե՝ բաղաք Գյումրի Պարույր Սևակ փողոց 10/8 և վարձակալական հիմունքներով հանձնել է Հայկանուշ Մկրտչյանին:

Անդրադառնալով Հայկանուշ Մկրտչյանի արարքում ենթադրյալ ինքնիրավչության հատկանիշների՝ հարկ է արձանագրել, որ Զարուհի Զիլբերշտեյնի և Հայկանուշ Մկտրչյանի միջև ծագած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ և ենթակա են լուծման քաղաքացիական իրավահարաբերությունների տիրույթում հետևյալ պատճառաբանությամբ.

Քրեական վարույթով ստացված փաստական տվյալները վկայում են այն մասին, որ Զարուհի Զիլբերշտեյնի կողմից օգտագործվող նկուղ տանող ճանապարհը անցնում է Հայկանուշ Մկրտչյանի կողմից ընդհանուր բաժնային սեփականությունից տարանջատված, վերջինիս կողմից անհատապես շահագործվող նկուղի տարածքով: Նման պայմաններում, իրացնելով իր ենթադրյալ քաղաքացիական իրավունքները, վերջինս իր ընդհանուր բաժնային սեփականությունից տարանջատված նկուղ մուտք գործելու համար տեղադրել է դուռ, սակայն առանձնացված անշարժ գույքի տարածք մուտք գործելու համար նախատեսված դռան առկայությունը, ինքնին սահմանափակում է Զարուհի Զիլբերշտեյնի կողմից օգտագործվող նկուղ մուտք գործելու հնարավորությունը: Այս պարագայում առկա է վեճ կողմերի միջև անշարժ գույքերի տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքների իրացման հնարավորության վերաբերյալ, ինչը փաստվում է նաև Զարուհի Զիլբերշտեյնի գործողություններով (խանութի տարածքից դեպի նկուղ անցք բացելը): Միևնույն ժամանակ Հայկանուշ Մկրտչյանին պատկանող անշարժ գույքի տարածք մուտք գործելու հնարավորությունը կարող է լինել կա՛մ վերջինիս համաձայնությամբ/թույլտվությամբ, կա՛մ դատական ակտով: Այսինքն՝ Հայկանուշ Մկտրչյանի անշարժ գույքի տարածքով այլ անշարժ գույքի տարածք անցումը կարող է կատարվել բացառապես կամավոր կամ հարկադիր գույքային սերվիտուտների կիրառման, կողմերի միջև այլ համաձայնության եղանակով:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է արձանագրել, որ Զարուհի Զիլբերշտեյնի կողմից իր կողմից փաստացի օգտագործվող նկուղի տարածք մուտք գործելու, այն ազատորեն իր նպատակային նշանակությամբ շահագործելու համար անհրաժեշտ պայման է Հայկանուշ Մկրտչյանի ընդհանուր բաժնային սեփականությունից առանձնացված նկուղի տարածքով անցնելու քաղաքացիական իրավունքի ամրագրումը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված որևէ եղանակի կիրառմամբ: Մինչդեռ հանրային քրեական հետապնդման մարմինները ոչ միայն չունեն օրենքով նախատեսված նման իրավունքների տրման լիազորություն, այլև որևէ եղանակով իրավասու չեն միջամտել քաղաքացիաիրավական հարաբերությունների ընթացքին:

Վերոգրյալից զատ, հարկ է արձանագրել, որ Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի ենթադրյալ գործողությունների արդյունքում Զարուհի Զիլբերշտեյնին իրավունքներին ազատություններին կամ օրինական շահերին էական վնաս պատճառելու վերաբերյալ ևս փաստական տվյալներ ձեռք չեն բերվել, ավելին հենց Զարուհի Զիլբերշտեյնն է իր ցուցմունքով հայտնել, որ հստակ չի կարող ասել, թե կատարվածի հետևանքով իրեն որքան

վնաս է պատճառվել, իր պահանջը մեկն է վերականգնել նկուղի դուռը և չխոչընդոտել իր մուտքը դեպի իր նկուղ, ինչը չի կարող դիտվել, որպես էական վնաս:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ նախաքննության ընթացքում հայտնաբերվել է Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ, 22-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և 196-րդ հոդվածի պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 18-0483-24 քրեական վարույթով Հայկանուշ Ալեքսանի Մկրտչյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին մասով և 460-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում չհարուցել՝ նրա կողմից իրեն վերագրվող արարքները չկատարելու հիմքով:

2. Որոշման օրինակն ուղարկել քննիչին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներն ապահովելու նպատակով:

3. Սույն որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 6-րդ մասում նշված անձինք կարող են բողոքարկել վերադաս դատախազին՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում կարող են բողոքարկել դատարան:

Շիրակի մարզի դատախազի
տեղակալ՝ Ա.Ալեքսանյան

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS

Հայաստանի Հանրապետություն
Ստ. Մելքումյան փ. 2.10 բն.41
«29» 05 2007 թ.
016

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՈՒՆԻ ԱՆՎԱՎԵՐ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN COUNTRIES UNTIL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆ
ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՆՈՒՆ
ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՆԴԱՎԱՅՐ
20.04.1991

ԾՆՆԴԱՎԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ
13.03.2024

ՎԱՎԵՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ
13.03.2034

ՆՇԻՉ ՎԱՎԵՐՈՂ
016

ՊԱՐԵՐԱՏԻՐՈՋ ԱՆՁՆԱԳԻՐ SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

| TYPE | COUNTRY CODE | PASSPORT No |
|---|---|---|
| P | ARM | AL0668451 |

SURNAME(S)
MKRTCHYAN

NAME
HAYKANUSH

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
20 APR 1991

PERSONAL No

SEX
F

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
13 MAR 2024

DATE OF EXPIRY
13 MAR 2034

AUTHORITY
016

P<ARMMKRTCHYAN<<HAYKANUSH<<<<<<<<<<<<<<<<<<<<
AL0668451 5ARM9104200F3403130<<<<<<<<<<<<<<<02